ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. դեկտեմբերի 2-3-ը Ռուսաստանի Դաշնություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Վահան Քերոբյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, 2021թ. դեկտեմբերի 2-3-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական Զարգացման Բանկ

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Եվրասիական երկրորդ համագումարին

6. Քննարկված թեմաները՝

Համագումարի շրջանակներում՝ ի թիվս այլ նիստերի, «Թվային Եվրասիա. ենթակառուցվածք, մեծ տվյալներ, ինքնիշխանություն» և «Գլոբալ ESG օրակարգ՝ ընդհանուր մարտահրավերներ և հնարավորություններ ԵԱՏՄ պետությունների համար» պանելային քննարկումների միջոցով, քննարկվել են բիզնեսի, գործարար շրջանակների և պետություն-մասնավոր հատվածի դերի բարձրացմանն առնչվող օրակարգային գործնական հարցեր՝ պետությունների ինտեգրման ներուժի բացահայտման, արդյունաբերական և տեխնիկական կոոպերացիայի խորացման, առաջադեմ տեխնոլոգիաների փոխանակման և ավելացված արժեքի նոր շղթաների ձևավորման գործում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2021թ. դեկտեմբերի 2-ին կայացած Համաժողովի շրջանակներում մասնակցել եմ «Առանցքային ներդրումային նախագծերը՝ ԵԱՏՄ-ում տնտեսական աճի համակարգային շարժիչներ» խորագրով լիագումար նիստին:
Որպես խոսնակ մասնակցել եմ «ԵԱՏՄ-ի միասնական ապրանքային բաշխման ցանց+՝ տարածաշրջանի պարենային անվտանգության երաշխիք և արտահանման ակտիվության կատալիզատոր» խորագիրը կրող նիստի աշխատանքներին: Քննարկվել են ցանցի ներդրման հնարավորությունները՝ որպես պարենային անվտանգությունն ապահովող և արտահանման ակտիվացման կատալիզատորի գործիք և արտադրական կորուստների նվազեցմանն ուղղված գործուն մեխանիզմ:

Նույն օրը հանդիպել եմ «Եվրասիական Զարգացման Բանկի» կառավարման խորհրդի նախագահի տեղակալ Դենիս Իլյինի հետ: Հանդիպման ժամանակ քննարկել ենք Հայաստանի մասնակցությունը 2022-2026թթ. համար մշակված ԵԱԶԲ ռազմավարության՝ փոխգործակցության հիմնական ուղղություններով, ինչպես նաև համատեղ միջոցառումների և ԵԱԶԲ-ի կողմից Հայաստանում ներդրումային ծրագրերի իրագործման հնարավորությունները:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝
06.12.2021թ.